

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ հիմնարկ) ունեցել է երեք կառուցվածքային ստորաբաժանում և գործել է 21 հաստիքային միավորով:

Հիմնարկը 2016 թվականի ընթացքում իրականացրել է 2016 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված 11 ոլորտային ծրագիր: Իրականացված ծրագրերի և հիմնարկի պահպանման ծախսերի համար նախատեսվել է 795 515 500 ՀՀ դրամ, որից 733 996 400 ՀՀ դրամը՝ ոլորտային ծրագրերի համար: Փաստացի ծախսվել է 793 383 198 ՀՀ դրամ, որից 732 479 597 ՀՀ դրամը ոլորտային ծրագրերի վրա: Տնտեսումը բոլոր ծրագրերից և պահպանման ծախսերից կազմել է 2 132 302 ՀՀ դրամ:

2016 թվականին հիմնարկը իրականացրել է հետևյալ ոլորտային ծրագրերը.

Ծրագիր 1. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ

Մրցույթն անցկացվել է ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում և 6 շրջաններում, որին մասնակցել են 2083 ընտանիք, թվով 6249 մարդ, այդ թվում՝ ընտանիքի կազմում հաշմադամություն ունեցող (հայրը կամ մայրը անվասայլակով) 22 ընտանիք՝ 66 մարդ: Ծրագրի համար նախատեսված է եղել 100 620 800 ՀՀ դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 99 723 600 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսման գումարը կազմել է 897 200 ՀՀ դրամ:

Ծրագիր 2. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթ

Ծրագրին մասնակցել են լողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր սահմանափակումներ ունեցող 165 անձինք:

Ծրագրի համար նախատեսված է եղել 15 795 000 ՀՀ դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 15 784 200 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսման գումարը կազմել է 10 800 ՀՀ դրամ:

Ծրագիր 3. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթ

Ծրագիրն անցկացվել է 3 փուլով՝ համայնքային, մարզային և եզրափակիչ, որին մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 241 նախադպրոցական հաստատությունների 2892 երեխաներ: Ծրագրի համար նախատեսված է եղել 17 689 600 ՀՀ դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 17 493 600 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսման գումարը կազմել է 196 000 ՀՀ դրամ:

Ծրագիր 4. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթ

Ծրագրի համար նախատեսված է եղել 1 341 600 ՀՀ դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 1 231 200 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսման գումարը կազմել է 110 400 ՀՀ դրամ:

Ծրագիր 5. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում

Ծրագիրն իրականացվել է ՀՀ մարզերի 48 քաղաքային համայնքներում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում: Ծրագրի համար նախատեսված է եղել 1 999 200 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման համար փաստացի ծախսվել է 1 999 200 ՀՀ դրամ:

Ծրագիր 6. Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում

Ծրագիրն իրականացվել է ՀՀ 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում: Ծրագրի համար նախատեսված է եղել 6 576 800 ՀՀ դրամ: Փաստացի ծախսերը

կազմել են 6 549 800 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսման գումարը կազմել է 27 000 ՀՀ դրամ:

Ծրագիր 7. ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում

ՀՀ հավաքական թիմերի մարզիկների և մարզիչների համար ձեռք են բերվել մարզահագուստ և մարզահանդերձանք (540 հատ սպորտային կոստյում, 540 հատ սպորտային գլխարկ, 540 հատ սպորտային շապիկ, 540 զույգ սպորտային կոշիկ, 540 հատ սպորտային պայուսակ, 379 հատ բաճկոն), որոնք բաշխվել են ՀՀ հավաքական թիմերի անդամներին (մնացորդ՝ 3 հատ սպորտային կոստյում, 3 հատ սպորտային գլխարկ, 3 հատ սպորտային շապիկ, 3 զույգ սպորտային կոշիկ, 3 հատ սպորտային պայուսակ, 3 հատ բաճկոն):

Ծրագիր 8. Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում

Ծրագրի շրջանակներում ամսական ՀՀ Նախագահի անվանական թոշակ են ստացել 90 մարզիկներ և 95 ՀՀ հավաքական թիմերի մարզիչներ ու անձնական մարզիչներ: Ծրագրով նախատեսվել և փաստացի ծախսվել է 206 520 000 ՀՀ դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 206 400 000 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսման գումարը կազմել է 120 000 ՀՀ դրամ: Ծրագիրը իրականացվել է 01.01.2016-25.12.2016 թթ ժամանակահատվածում:

Ծրագիր 9. ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացում

Ծրագրի շրջանակներում ամսական թոշակ են ստացել ՀՀ-ում բնակվող 29 աշխարհի չեմպիոններ, և վարձատրվել են հենակետային մարզաձևերի թվով 16 գլխավոր և ավագ մարզիչներ: Ծրագրով նախատեսվել է 40 973 400 ՀՀ դրամ, փաստացի ծախսվել է 40 818 000 ՀՀ դրամ: Ծրագրից տնտեսումը կազմում է 155 400 ՀՀ դրամ:

Ծրագիր 10. Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում

Ծրագրի շրջանակներում տարեվերջին պարգևատրվել են 36 մարզադպրոցներ, 88 մարզիկներ, 124 մարզիչներ և 9 բժիշկներ: Ծրագրով նախատեսվել է 50 000 000 ՀՀ դրամ, և լրացուցիչ 292 480 000 ՀՀ դրամ հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Փաստացի ծախսվել է (տրվել է պարգևատրում) 342 480 000 ՀՀ դրամ:

Ծրագիր 11. Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում

Ձեռք է բերվել և բաշխվել ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 21-ի № 408-Ա որոշմամբ նախատեսված մարզագույքը՝ նույն որոշմամբ նշված կազմակերպություններին:

Հիմնարկի պահպանման ծախսեր

Հիմնարկի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով նախատեսվել է 61 519 100 ՀՀ դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 60 903 601 ՀՀ դրամ: Պահպանման ծախսերից տնտեսվել է 615 498 ՀՀ դրամ, որից 3 579 ՀՀ դրամը՝ աշխատավարձից, 19 500 ՀՀ դրամը՝ կոմունալ ծառայություններից, 343 480 ՀՀ դրամը՝ կապի ծառայություններից, 1 000 ՀՀ դրամը՝ ներքին գործուղումներից, 226 544 ՀՀ դրամը՝ համակարգչային ծառայություններից, 44 ՀՀ դրամը՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայություններից, 67 ՀՀ դրամը՝ գրասենյակային նյութերից, 3 ՀՀ դրամը՝ տրանսպորտային նյութերից, 81 ՀՀ դրամը՝ կենցաղային և հանրային սննդի նյութերից, 21 200 ՀՀ դրամը՝ պարտադիր վճարներից: Պահպանման ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

(Հիմնարկի գործունեությունը դադարեցվել է ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի № 1121-Ն որոշմամբ)